



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Նյութեր թիվ 0001/11/10թ.
Նախագահող դատավոր՝ Հ.Արրահամյան

Նյութեր թիվ 0001/11/10թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

2010թ. նոյեմբերի 17-ին

ք. Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր
դատավորներ՝

Զ.Օհանյանի
Գ. Հարությունյանի
Ի.Կարապետյանի

մասնակցությամբ՝ քարտուղար
բողոք բերած անձ՝
դատախազ՝

Է.Գաբրիելյանի
Ա.Զաքարյանի
Գ.Ներսիսյանի

դրնբաց դատական նիստում քննելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի 2010թ. օգոստոսի 26-ի որոշման վերաբերյալ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. հոկտեմբերի 12-ի որոշման դեմ Արկաղի Զաքարյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Արթուր Զաքարյանի հոր՝ Արկաղի Զաքարյանի հայտարարության հիման վրա, ոստիկանության Ստեփանակերտի վարչությունում, նյութերի նախապատրաստման արդյունքում 2010 թվականի օգոստոսի 9-ին որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Նշված որոշման դեմ դիմողը 11.08.2010թ. բողոք է ներկայացրել ԼՂՀ Գլխավոր դատախազին, բողոքը ուղարկվել է Ստեփանակերտ քաղաքի դատախազին հետաքննության մարմնի կողմից 9.08.2010թ. ընդունված որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու համար: 16.08.2010թ. Ստեփանակերտ քաղաքի

դատախազության որոշմամբ վերացվել է քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ որոշումը և նյութերը լրացուցիչ նախապատրաստման համար ուղարկվել նույն վարչություն:

28.08.2010թ. որոշում է կայացվել նախապատրաստված լրացուցիչ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Արկադի Չաքարյանը գտնելով, որ հետաքննության մարմնի 28.08.2010թ. որոշումն անհիմն և անօրեն է, կայացված է վաղաժամ, իր դիմումում ներկայացված փաստերը չեն ստուգվել և գնահատական չի տրվել դրանց, չեն վերացվել 16.08.2010թ. դատախազի որոշման մեջ նշված թերությունները, նորից դիմել է Ստեփանակերտ քաղաքի դատախազություն՝ նախապատրաստված լրացուցիչ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու համար: 07.09.2010թ. թիվ 12/26-բ-102 գրությամբ իրեն հայտնվել է, որ իր դիմումում ներկայացված փաստարկները իրենց հիմնավորումները չեն գտել, հետաքննության մարմնի որոշումն օրինական և հիմնավոր է, այն վերացնելու հիմքեր չեն հայտնաբերվել, որի արդյունքում որոշում է կայացվել դիմումի բավարարումը մերժելու մասին:

Որոշման դեմ Արկադի Չաքարյանը բողոք է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի (այսուհետ՝ առաջին ատյանի) դատարան: Առաջին ատյանի դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ բողոքը մերժել է:

Արկադի Չաքարյանը նշված որոշումը բողոքարկել է ԼՂՀ վերաքննիչ (այսուհետ՝ վերաքննիչ) դատարան: Վերաքննիչ դատարանը 2010թ. հոկտեմբերի 12-ի որոշմամբ բողոքը թողել է առանց քննության այն պատճառաբանությամբ, որ վերաքննիչ բողոքը բերել է այն անձը, ով չունի այդ իրավունքը:

Արկադի Չաքարյանը վերաքննիչ դատարանի 12.10.2010թ. որոշման դեմ վճարեկ բողոք է ներկայացրել:

Վճարեկ բողոքը 2010թ. նոյեմբերի 3-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

2. Գործի փաստական հանգամանքները.

Արկադի Չաքարյանը 2010թ. հուլիսի 3-ին հաղորդում է տվել ոստիկանության Ստեփանակերտի վարչություն այն մասին, որ 24.07.2010թ. ժամը 17-ի սահմաններում, Ստեփանակերտ քաղաքի «Գետափ» կոչվող հանգստյան գոտու մոտակայքում Արտակ Վանյանը ծեծի է ենթարկել իր որդի Արթուր Չաքարյանին և հասցրել մարմնական վնասվածքներ: Ոստիկանության ՊԲ տեղամասային տեսուչ Ն.Ղահրամանյանի և ավագ հետաքննիչ Գ.Գրիգորյանի կողմից նախապատրաստվել են նյութեր, նշանակվել՝ դատաբժշկական և դատահոգեբուժական փորձաքննություններ, որոնցով հաստատվել է, որ վեճակովի ընթացքում Արտակ Վանյանին և Արթուր Չաքարյանին պատճառվել են առողջության թեթև վնաս առողջության քայքայումով: Արթուր Չաքարյանը տառապել և ներկայումս տառապում է «Օլիգոֆրենիա արտահայտված իմբեցիվություն, վարքի խանգարումներով» հոգեկան հիվանդությամբ: Դատահոգեբանական փորձաքննությամբ Արթուր Չաքարյանը ճանաչվել է սահմանափակ մեղսունակ:

Արթուր Չաքարյանին ծեծի ենթարկելու դեպքի առթիվ նյութերի նախապատրաստման ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից հիմնավորվել է, որ 2010թ. հուլիսի 24-ին, ժամը 17-ի սահմաններում, «Գետափ» կոչվող հանգստյան գոտու մոտակայքում Թելման Ղազարյանի հողաթափերը Արթուր Չաքարյանի կողմից գետը նետելու պատճառով վերջինիս և Արտակ Վանյանի միջև վեճակով է առաջացել, որի ընթացքում նրանք միմյանց առողջությանը թեթև վնաս են հասցրել, սակայն նկատի ունենալով, որ Չաքարյանի և Վանյանի արարքներում առկա են ԼՂՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններ, իսկ վերջիններս, այդ թվում և Արկադի Չաքարյանը դիմումներ են ներկայացրել Ստեփանակերտ քաղաքի ոստիկանության վարչություն, այն մասին, որ պահանջ չունեն, չեն ցանկանում իրար քրեական պատասխանատվության ենթարկել՝

ելնելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներից, 26.08.2010թ. որոշում է կայացվել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Արթուր Զաքարյանը գրել, կարդալ չգիտի:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոք բերած անձի՝ վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է դատավարական նորմերի պահանջների խախտումով:

Բողոք բերած անձը նշված պնդումները հիմնավորում է հետևյալ հանգամանքներով.

«Դատարանը հիմք է ընդունել ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, համաձայն որի՝ կասկածյալը, մեղադրյալը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև դիմողն իրավունք ունեն վերաքննության կարգով բողոքարկելու սույն օրենսգրքի 394-րդ հոդվածի 4-7-րդ կետերով նախատեսված դատական ակտերը: Նշված հոդվածի համաձայն՝ ինքը հանդիսանում է դիմող և առաջին աստիճանի դատարանում հանդես է եկել որպես դատավարության կողմ: Դատարանը հաշվի չի առել նաև ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները, համաձայն որոնց բողոքները կարող են դատարան ներկայացվել այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով: Նշված որոշումներով խախտվել են իր իրավունքները և օրինական շահերը, որը մանրակրկիտ շարադրել է իր վերաքննիչ բողոքում:

Դատարանը իր որոշումը հիմնավորել է նաև այնպես, որ «Վերաքննիչ դատարան ներկայացված վերաքննիչ բողոքի և թիվ 0001-11/2010թ. նյութերից բխում է, որ Արկադի Զաքարյանը հանդիսանում է Արթուր Զաքարյանի հայրը, որը սակայն օրինական ներկայացուցչի կարգավիճակ (և հետևաբար նաև քրեադատավարական իրավունակություն) կարող էր ձեռք բերել միայն, եթե Արթուր Զաքարյանը լիներ անչափահաս կամ անգործունակ, ինչպիսի տվյալներ առկա չեն»: Դատարանի նման հիմնավորումը գտնում է անհիմն, քանի որ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն ինքը իրավունք ունի բողոք ներկայացնելու դատարան, քանի որ կայացված որոշմամբ (26.08.2010թ.) խախտվել են իր իրավունքները և օրինական շահերը»:

Գտնելով, որ վերաքննիչ դատարանի դատական սխալը իր համար առաջացրել է ծանր հետևանքներ, Արկադի Զաքարյանը խնդրում է, որպես անհիմն և անօրեն՝ բեկանել վերաքննիչ դատարանի 2010թ. հոկտեմբերի 12-ի «վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշումը և որոշում կայացնել բողոքը վարույթ ընդունելու և դատաքննություն նշանակելու մասին:

4. ԼՂՀ Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով ներկայացված նյութերը՝ ԼՂՀ Գերագույն (այսուհետ՝ Գերագույն) դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է և ենթակա՝ բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն՝ դիմող հանդիսանում է յուրաքանչյուր անձ, որը դիմել է դատարան կամ քրեական հետապնդման մարմնին՝ քրեական դատավարության կարգով խախտված իրավունքների պաշտպանության համար:

Դիմող Արկադի Զաքարյանը, բողոքարկելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննության մարմնի որոշումը, իր բողոքը հիմնավորել է նրանով, որ

հետաքննության մարմինը բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ չի ստուգել «Գետափ» հանգստյան գոտում տեղի ունեցած դեպքի, վեճակովի փաստական հանգամանքները:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-ին մասի վերջին նախադասության համաձայն, սույն օրենսգրքի 394-րդ հոդվածի 4-7-րդ կետերով նախատեսված դատական ակտերը վերաքննության կարգով բողոքարկելու իրավունք ունի նաև դիմողը:

Ըստ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝ առաջին ատյանի դատարանի՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների կապակցությամբ կայացված որոշումները:

Նշված հոդվածների պահանջներից հետևում է, որ հանցագործության մասին հաղորդում տվող անձը՝ դիմողն իրավասու է վերաքննության կարգով բողոքարկելու առաջին ատյանի դատարանի՝ հետաքննության մարմնի աշխատակցի որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքների կապակցությամբ կայացված որոշումները, քանի որ դիմողի կողմից նշված որոշումների բողոքարկման կարգը ուղղակիորեն սահմանված է քրեական դատավարության օրենսդրությամբ:

Նյութերից երևում է, որ հանցագործության մասին հաղորդում է տվել Արկաղի Չաքարյանը, որն այնուհետև, հետաքննության մարմնի ընդունած որոշումը սահմանված կարգով բողոքարկել է դատախազին և առաջին ատյանի դատարան:

Չեռևաբար, Գերագույն դատարանը գտնում է, որ Արկաղի Չաքարյանը իրավունք ուներ հետաքննության մարմնի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերելու վերաքննիչ բողոք, իսկ վերաքննիչ դատարանը որևէ իրավական հիմք չունեի նրա վերաքննիչ բողոքը քննության չընդունելու և դրա նկատմամբ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ գլխի կանոնները, ինչպես նաև այդ գլխի հետ օրգանապես կապված 48-րդ գլխի որոշ կանոններ չկիրառելու համար:

Ինչ վերաբերում է վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշման այն պատճառաբանությանը, որ «Արկաղի Չաքարյանը հանդիսանում է Արթուր Չաքարյանի հայրը, որը սակայն օրինական ներկայացուցչի կարգավիճակ (և հետևաբար նաև քրեադատավարական իրավունակություն) կարող էր ձեռք բերել միայն, եթե Արթուր Չաքարյանը լիներ անչափահաս կամ անգործունակ, ինչպիսի տվյալներ առկա չեն», ինչպես նաև ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 400-րդ հոդվածի 2-րդ կետով (վերաքննիչ բողոքը բերել է այն անձը, ով չունեի այդ իրավունքը) վերաքննիչ դատարանի որոշմամբ բողոքը առանց քննության թողնելու հետևությանը, ապա Գերագույն դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր դեպքում վերաքննիչ դատարանը նման համոզման կարող էր հանգել միայն վերաքննիչ բողոքը քննության առնելով: Ավելին, նյութերով հաստատված է, որ Արթուր Չաքարյանը տառապում է «Օլիգոֆրենիա արտահայտված իմբիցիություն, վարքի խանգարումներով» (տկարամտության միջին աստիճան) հոգեկան հիվանդությամբ, գրել ու կարդալ չգիտի: Նման փաստական հանգամանքների առկայության պայմաններում, վերաքննիչ դատարանը պարտավոր է եղել պարզելու՝ արդյոք Արթուր Չաքարյանը ինքնուրույն ի վիճակի է եղել ներկայացնելու իր շահերը և պաշտպանելու դրանք, եթե ոչ, ապա նրա շահերը ով պետք է ներկայացնեի գործի մինչդատական վարույթում, խախտվել են արդյոք Արկաղի Չաքարյանի իրավունքները, թե ոչ:

Միևնույն ժամանակ Գերագույն դատարանն արձանագրում է, որ դիմողը կարող է քրեադատավարության մասնակցի կարգավիճակ ձեռք բերել միայն հարուցված քրեական գործով, վարույթը իրականացնող պաշտոնատար անձի որոշմամբ, ուստի հանցագործության

մասին հաղորդում տալը, հետաքննության մարմնի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը դատախազին, առաջին ատյանի դատարան բողոքարկելը, առաջին ատյանի դատարանի դատական նիստին մասնակցելը ինքնին հիմք չեն կարող հանդիսանալ Արկադի Ջաքարյանի համար ձեռք բերելու քրեադատավարության մասնակցի կարգավիճակ:

Գերագույն դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ որոշումը վերացնելու դիմողի պահանջը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննիչ դատարան բողոքարկելու հնարավորության, վերաքննիչ դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելու իրավաչափության հարցերով առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 421-423-րդ, 436-րդ, 438-440-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դիմող Արկադի Ջաքարյանի վճռաբեկ բողոքը բավարարել. բեկանել վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին վերաքննիչ դատարանի 2010թ. հոկտեմբերի 12-ի որոշումը և նյութերը վերադարձնել նույն դատարան՝ ըստ էության քննելու համար:
2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Զ.ՕՀԱՆՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**